ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԱՆՈՒՇ ՇԻՐԻՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

ՀՀ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Հիմնաբառեր. *հանցավորության մակարդակ, լատենտային հանցագործություններ, ավտոկոռելյացիա, Դարբին-Ուոթսոնի չափանիշ, ավտոռեգրեսիոն մոդելավորում*

Հանցավորության մակարդակը մարդկության գլոբալ հիմնախնդիրներից է: Ներկայումս այն ավելի ու ավելի խորն է ներթափանցում հասարակական կյանքի տարբեր ոլորտներ: Հանցավորության վիճակագրական բնութագրիչները դիտարկվում են որպես սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշների համակարգի կարևոր բաղկացուցիչներ: Դրանք ազգային անվտանգության ապահովման առանցքային գործոններից են, որոնց բարելավումը նպաստում է հասարակության ներդաշնակ զարգացմանը և կյանքի որակի բարձրացմանը: Ուստի կարևոր խնդիր է ՀՀ հանցավորության զարգացման առանձնահատկությունների վիճակագրական վերլուծությունը, ինչին էլ նվիրված է սույն հոդվածը:

90-ական թվականներից սկսած՝ Հայաստանում հանցավորությունը դարձել է սոցիալական ոլորտի առավել հիվանդագին և սոցիալապես նշանակալի խնդիրներից մեկը: Դա պայմանավորված է նրանով, որ տնտեսական բարեփոխումների անցկացումը մեծ ազդեցություն ունեցավ բնակչության խնայողությունների արժեզրկման, բաց և ստվերային գործազրկության աճի, տարածաշրջանների և բնակչության առանձին խմբերի կտրուկ սոցիալ-տնտեսական շերտավորման վրա: Հայաստանի բնակչության կենսամակարդակն ըստ տնտեսական միջազգային չափորոշիչների ծայրահեղ ցածր էր: 1992-1993 թթ. ընթացքում մեր հանրապետությունում համախառն ներքին արդյունքի կտրուկ անկում արձանագրվեց՝ նվազելով համապատասխանաբար՝ 41.8 և 8.8%-ով[1]: Գործազրկությունը դարձավ հիմնախնդիր, և բարձրացավ աղքատության մակարդակը, քանի որ իրական եկամուտների և սպառման մակարդակներն էապես կրճատվել էին: Այսպիսի պայմաններում բնակչության որոշակի մասի համար կողմնորոշիչ դարձավ խնդիրների լուծման քրեական ճանապարհը:

Տնտեսական և սոցիալական դժվարությունների հաղթահարման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական աճին և զարգացմանը նպաստող կայուն մակրոտնտեսական միջավայրի ստեղծման և պահպանման նպատակով Հայաստանի իշխանությունները սկսեցին իրականացնել համապարփակ տնտեսական քաղաքականություն և կառուցվածքային փոփոխություններ տնտեսության բոլոր ճյուղերում, որի արդյունքը եղավ, 1994 թ-ից

[1] https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=AM&view=chart&year_high_desc=true:

սկսած, կայուն տնտեսական աճը (բացառությամբ 2009 թ., երբ գրանցվեց տնտեսության խոր՝ 14.2%-անոց անկում՝ կապված գլոբալ տնտեսական ճգնաժամի հետ): Վերջինս զգալի էր հատկապես 2001-2007 թթ. ընթացքում, երբ տնտեսությունը սկսեց աճել երկնիշ թվերով՝ տարեկան միջինը 12.5%-ով[1]:

Սակայն ՀՀ սոցիալական և տնտեսական ոլորտներում դեռևս կան չլուծված լուրջ խնդիրներ (բնակչության աղքատության, գործազրկության բարձր մակարդակները և այլն), որոնք բացասաբար են անդրադառնում հանրապետության քրեական իրավիճակի վրա:

Աղյուսակ 1

ՀՀ հանցավորության դինամիկան 2000-2016 թթ.[2]

Տարիներ	Գրանցված հանցագործություններ թիվը, դեպք	Հանցավորության մակարդակը (10 հազ. բնակչի հաշվով)	Հանցավորության մակարդակի աճի տեմպը (2000 թ-ի նկատմամբ), %	Հանցավորության մակարդակի աճի տեմպը (նախորդ տարվա նկատմամբ), %
2000	12048	37.5	-	-
2001	11483	35.7	95.2	95.2
2002	12074	37.6	100.3	105.3
2003	11073	34.5	92.0	91.8
2004	10083	31.3	83.5	90.7
2005	8875	27.6	73.6	88.2
2006	9757	30.3	80.8	109.8
2007	8428	26.1	69.6	86.1
2008	9271	28.6	76.3	109.6
2009	14339	44.3	118.1	154.9
2010	15477	47.4	126.4	106.9
2011	16572	54.7	145,9	115.4
2012	15776	52.2	139.2	95.4
2013	18333	60.7	161.9	116.2
2014	17546	58.2	155.2	95.9
2015	17043	56.7	151.2	97.4
2016	18764	62.7	167.2	110.6

Աղյուսակ 1-ում բերված տվյալները վկայում են այն մասին, որ գրանցված հանցագործությունների թիվը 2016 թ-ին կազմել է 18764 դեպք, որը 2000 թ-ի համեմատ աճել է 55.7%-ով, իսկ 2015 թ-ի համեմատ՝ 10.1%-ով: 2001-2008 թթ. հանցագործությունների բացարձակ մեծությունը տատանվել է համեմատաբար կայուն տեմպերով: Սակայն, 2009 թ-ին հանրապետությունում նկատվել է գրանցված հանցագործությունների շեշտակի աճ: Այսպես՝ 2009 թ. ՀՀ-ում գրանցված հանցագործությունների թիվը կազմել է 14339 դեպք, որը 2000 թ-ի համեմատ ավելի է 19.1%-ով, իսկ 2008 թ-ի համեմատ՝ 54.7%-ով: Հանցագործությունների քանակի նման աննախադեպ աճը պայմանավորված է նրանով, որ

[1] https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=AM&view=chart&year_high_desc=true:

[2] Աղյուսակը կազմվել է ըստ ՀՀ ոստիկանության հաշվետվությունների և հեղինակի հաշվարկների, աղբյուրը՝ http://www.police.am:

2009 թ-ից հանրապետությունում ակտիվացվել են լատենտային (ստվերային) բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերման (կոռուպցիոն բնույթի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված, տնտեսության ոլորտում կատարված հանցագործություններ և այլն), ինչպես նաև հանցագործությունները հաշվառումից թաքցնելու արատավոր գործելաոճը բացառելու ուղղությամբ աշխատանքները:

Հանցագործությունների ընդհանուր թվի նման փոփոխությունների պարագայում, բնականաբար, տատանվել է նաև հանցավորության մակարդակի ցուցանիշը: ՀՀ հանցավորության ընդհանուր մակարդակը 2000-2016 թթ. ընթացքում աճել է 67.2%-ով՝ յուրաքանչյուր տարի ենթարկվելով մեծ փոփոխությունների: Այսպես՝ ՀՀ հանցավորության մակարդակը 2002 թ. 2001 թ-ի համեմատ աճել է, որից հետո մինչև 2008 թ. հիմնականում նվազել է կայուն տեմպերով (առավելագույն չափով նվազել է 2007 թ.՝ 2000 թ-ի նկատմամբ 30.4%-ով, իսկ նախորդ տարվա նկատմամբ՝ 13.9%-ով): 2008 թ-ից աճի միտումը վերականգնվել է, ընդ որում, 2009 թ. նկատվել է հանցավորության մակարդակի ամենամեծ հավելաճը՝ նախորդ տարվա նկատմամբ 54.9%-ով: 2014 թ-ից ՀՀ հանցավորության մակարդակը նվազման միտում է ձեռք բերել, սակայն դանդաղ տեմպերով, իսկ 2016 թ. կրկին աճել է՝ նախորդ տարվա նկատմամբ 10.6%-ով:

ՀՀ հանցավորության զարգացման առանձնահատկությունների առավել խոր հետազոտության և կանխատեսումների իրականացման համար անհրաժեշտ է վերլուծել դրա զարգացման միտումները:

Նախ՝ ՀՀ հանցավորության մակարդակի 2000-2016 թթ. շարքի համար չափվել է ավտոկոռելյացիան՝ Դարբին-Ուոթսոնի չափանիշի օգնությամբ և բացահայտվել է, որ վերլուծվող շարքի հարևան մակարդակների միջև գոյություն ունի դրական ավտոկոռելյացիա (Դարբին-Ուոթսոնի d վիճակագրի արժեքը ստացվել է 0-ին մոտ)[1]: Ուստի առավել ճշգրիտ կանխատեսում կատարելու համար անհրաժեշտ է օգտվել ավտոռեգրեսիոն մոդելից:

Տարբեր կարգի ավտոռեգրեսիոն մոդելները, ստացված Microsoft Excel ծրագրի միջոցով[2], ներկայացված են աղյուսակ 2-ում: Ընդ որում, առաջին, երկրորդ և երրորդ կարգի ավտոռեգրեսիոն մոդելներ կառուցելու համար 17 փոփոխականից բացառում են մեկը, երկուսը և երեքը[3]:

Աղյուսակի տվյալները վկայում են, որ $\alpha = 0.05$ նշանակալիության մակարդակի և 10 ազատության աստիճանների դեպքում ամենաբարձր կարգ ունեցող պարամետրի նշանակալիության մասին զրոյական վարկածը ժխտելու հիմքեր չկան $(-2.23 < t_{STAT} = -0.69 < +2.23$

---

[1] Business Statistics, A Decision-Marking Approach, David F. Groebner, Patrick W. Shannon, Phillip C. Fry, Kent D. Smith, p. 729.

[2] Статистика для менеджеров с использованием Microsoft Excel /Леван, Стефан, Кребиль, Беренсон/, Москва - Петербург – Киев, 2005, с. 880.

[3] Basic Business Statistics: Concepts and Applications, Mark L. Berenson, David M. Levine, Timothi C. Krehbiel, Pearson, 2012, p. 684.

և $p = 0.51 > \alpha = 0.05$), ուստի ավտոռեգրեսիոն մոդելում երրորդ կարգի պարամետրը վիճակագրորեն նշանակալի չէ և պետք է հեռացնել:

Աղյուսակ 2

ՀՀ հանցավորության մակարդակի կանխատեսման ավտոռեգրեսիոն մոդելները

Ավտոռեգրեսիոն մոդելի կարգը	Ավտոռեգրեսիոն մոդելի հավասարումը	Ազատության աստիճաններ	t-stat	p-value
Երրորդ կարգ	$\hat{Y}_t = 4.4 + 0.96 \cdot Y_{t-1} + 0.21 \cdot Y_{t-2} - 0.24 \cdot Y_{t-3}$	10	-0.69	0.51
Երկրորդ կարգ	$\hat{Y}_t = 2.73 + 0.97 \cdot Y_{t-1} + 0.004 \cdot Y_{t-2}$	12	0.01	0.98
Առաջին կարգ	$\hat{Y}_i = 2.24 + 0.98 \cdot Y_{i-1}$	14	7.93	0.00

Ավտոռեգրեսիոն մոդելում երկրորդ կարգի պարամետրը նույնպես վիճակագրորեն նշանակալի չէ $(-2.18 < t_{STAT} = 0.01 < +2.18$ և $p = 0.98 > \alpha = 0.05)$ և պետք է հեռացնել:

$\alpha = 0.05$ նշանակալիության մակարդակի և 14 ազատության աստիճանների դեպքում ավտոռեգրեսիոն մոդելում առաջին կարգի պարամետրի նշանակալիության մասին զրոյական վարկածը ժխտվում է $(t_{STAT} = 7.93 > +2.14$ և $p = 0.00 < \alpha = 0.05)$, ուստի այն վիճակագրորեն նշանակալի է և չպետք է հեռացնել մոդելից: Այսպիսով՝ առաջին կարգի ավտոռեգրեսիոն մոդելը մյուսներից լավ է մոտարկում ելակետային տվյալները, ուստի այն կարելի է կիրառել ՀՀ հանցավորության մակարդակի կարճաժամկետ կանխատեսման համար: Կանխատեսումը կատարվել է մինչև 2020 թ., քանի որ կանխատեսման ժամանակաշրջանը պետք է չգերազանցի բազիսային ժամանակաշրջանի 1/3-ը կամ առավելագույնը՝ 1/2-ը: Առավել երկար ժամկետների դեպքում կանխատեսման հուսալիությունը նվազում է:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2000-2020 թթ. ՀՀ գրանցված հանցավորության փաստացի և հարթեցված մակարդակները, ինչպես նաև դրանց մնացորդները, այսինքն՝ փաստացի և հարթեցված մեծությունների տարբերությունները:

Աղյուսակ 3

ՀՀ հանցավորության մակարդակի կանխատեսումը 2017-2020 թթ.

Տարիներ	Հանցավորության փաստացի մակարդակը (10 հազ. բնակչի հաշվով)	Հանցավորության հարթեցված մակարդակը (10 հազ. բնակչի հաշվով)	Մնացորդ
2000	37.5	-	-
2001	35.7	39.1	-3.4
2002	37.6	37.4	0.2
2003	34.5	39.2	-4.7
2004	31.3	36.2	-4.9
2005	27.6	33.0	-5.4
2006	30.3	29.4	0.9
2007	26.1	32.1	-6.0
2008	28.6	27.9	0.7

Աղյուսակ 3-ի շարունակությունը

Տարիներ	Հանցավորության փաստացի մակարդակը (10 հազ. բնակչի հաշվով)	Հանցավորության հարթեցված մակարդակը (10 հազ. բնակչի հաշվով)	Մնացորդ
2009	44.3	30.4	13.9
2010	47.4	45.8	1.6
2011	54.7	48.9	5.8
2012	52.2	56.1	-3.9
2013	60.7	53.6	7.1
2014	58.2	62.0	-3.8
2015	56.7	59.5	-2.8
2016	62.7	58.0	4.7
2017	-	63.9	-
2018	-	65.2	-
2019	-	66.3	-
2020	-	67.5	-

Այսպիսով՝ թեպետ որոշ տարիներին ՀՀ հանցավորության մակարդակը նվազել է, սակայն, ընդհանուր առմամբ, այն ունի աճի միտում: 2017-2020 թթ. ընթացքում կանխատեսվում է 1.9% միջին տարեկան աճ, որի արդյունքում ՀՀ հանցավորության կանխատեսվող մակարդակը 2020 թ. 10 հազար բնակչի հաշվով կազմում է 67.5 հանցագործություն: Վերջինս 2016 թ. համեմատ ավելի է 7.7%-ով, իսկ 2000 թ-ի մակարդակը գերազանցում է ավելի քան 1.8 անգամ:

АНУШ ШИРИНЯН

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ И ПРОГНОЗИРОВАНИЕ ОСОБЕННОСТЕЙ РАЗВИТИЯ ПРЕСТУПНОСТИ РА

Ключевые слова: *уровень преступности, латентные преступления, автокорреляция, статистика Дарбина-Уотсона, авторегрессионное моделирование*

Уровень преступности - одна из глобальных проблем человечества. В настоящее время она все глубже проникает в разные сферы общественной жизни. Статистические характеристики преступности рассматриваются как важные составляющие системы показателей социально-экономического развития. Они являются ключевыми факторами обеспечения национальной безопасности и их улучшение способствует гармоничному развитию общества и повышению качества жизни. Поэтому важной проблемой представляется статистический анализ особенностей развития преступности РА, чему и посвящена данная статья.

ANUSH SHIRINYAN

THE STATISTICAL ANALYSIS AND PREDICTION OF THE SPECIFICS OF THE CRIME DEVELOPMENT IN RA

Key Words: *the level of crime, latent crimes, autocorrelation, the Durbin-Watson statistic, autoregressive modeling*

The level of crime is one of the global issues of humanity. Currently, it is penetrating deeper into various spheres of public life. The statistical characteristics of crime are considered as important components of the system of social and economic development indicators. These are key factors of ensuring national security, and their improvement contributes to the harmonious development of society and the improvement of life quality. Therefore, the statistical analysis of the specifics of the crime development in RA is an important problem, to which this article is devoted.

ԼՅՈՎԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ
Մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր, ՀՊՏՀ
ՄԵՍՐՈՊ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Դասախոս, ՀՊՏՀ

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հիմնաբառեր. *դաստիարակություն, ֆիզիկական կուլտուրա, սպորտ, բարոյագիտություն, էթիկա, սպորտային արժեքներ, օլիմպիզմ, գիտակցություն, առողջություն*

Այսօր, քան երբևէ, սպորտային մանկավարժության մեջ մեծ դեր և նշանակություն ունի բարոյագիտական դաստիարակությունը երիտասարդության շրջանում: Մեծ ուշադրություն դարձնելով օլիմպիական շարժմանը՝ հոդվածում կատարվում են մի շարք առաջարկություններ և տրվում խորհուրդներ բարոյական արժեքների դաստիարակման և ամրապնդման, այդ բնագավառում գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ:

Կասկածից վեր է, որ ֆիզիկական դաստիարակության և սպորտային մանկավարժության բնագավառում բարոյագիտական դաստիարակության նորագույն ձևերի ու սկզբունքների հիմնավորումը և արմատավորումը երիտասարդության շրջանում այսօր, քան երբևէ ժամանակի հրամայական պահանջներ են: Ճիշտ և ուղղորդված աշխատանքներն այդ ուղղությամբ հնարավորություն կտան առավել խորությամբ գնահատելու ու ճանաչելու իսկական մարդկային արժեքները, ստեղծելու նոր հասարակություն, նոր երիտասարդություն՝ իր ուրույն մտածելակերպով և սովորույթներով: Հավելենք, որ դաստիարակությունը, ինքնին, նպատակաուղղված ներգործություն է մարդկանց գիտակցության և